# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի հանրապետության կոտայքի մարզի Ակունքի համայնք,
հասցե՝ գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72 հեռ.(0222)6-01-60
էլ. փոստ՝ akunq.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՓԵՏՐՎԱՐԻ 2015թվականի N 6

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 2-Ի ԹԻՎ 2 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի , հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը , համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել համայնքի ավագանու 2015 թվականի փետրվարի 2-ի թիվ 2 արտահերթ նիստի օրակարգը

1.Համայնքի ավագանու 2014թվականի դեկտեմբերի 10-ի N 39-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

2.Համայնքի ավագանու 2015թվականի հունվարի15-ի N 5-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

Ավագանու անդամներ

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ............................ԱՎԱԳՅԱՆ ՆԱՐԻՆԵ

2.......................... ԱՎԵՏԻՍՅԱՆ ՔԱՋԻԿ

3.......................... ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ՄԻՀՐԱՆ

4............................ ՄԿՐՏՉՅԱՆ ԳՈՌ

5. ............................ՍԱՄՍՈՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

6. ............................ՏԻԳՐԱՆՅԱՆ ԷԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի հանրապետության կոտայքի մարզի Ակունքի համայնք,
հասցե՝ գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72 հեռ.(0222)6-01-60
էլ. փոստ ՝ akunq.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՓԵՏՐՎԱՐԻ 2015թվականի N 7-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10 - Ի N 39 - Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն « Իրավական ակտերի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի ,«Տեղական ինքնակառավարման մասին »Հայաստանի Հանրապետության օրենքի $77^5$-րդ հոդվածի, նկատի առնելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 2015թվականի հունվարի 30-ի N07/15.1/333-15 գրությունը ,համայնքի ավագանին որոշում է՝

1. Համայնքի ավագանու 2014թվականի դեկտեմբերի 10-ի « Ակունքի համայնքի 2015 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին » N 39-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները .
1) որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ համաձայն հավելվածի :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տաս ներորդ օրը:

Ավագանու անդամներ

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ..................ԱՎԱԳՅԱՆ ՆԱՐԻՆԵ

2. ..................ԱՎԵՏԻՍՅԱՆ ՔԱՋԻԿ

3. ..................ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ՄԻՀՐԱՆ

4. .................. .ՄԿՐՏՉՅԱՆ ԳՈՌ

5. ..................ՍԱՄՍՈՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

6. ..................ՏԻԳՐԱՆՅԱՆ ԷԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

*Հավելված*
*Ակունքի համայնքի ավագանու*
*2015 թ փետրվարի 2-ի N 7-Ն որոշման*

## Ակունքի համայնքում 2015 թվականի համար սահմանված տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը

| Հ/հ | Տուրքերի տեսակները | Օրենքով սահմանված դրույքաչափը (դրամ) | Ավագանու սահմանված դրույքաչափը (դրամ ) |
|---|---|---|---|
| 1 | Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների ( ներառյալ՝ոչ հիմնական ) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ | | |
| | հիմնական օբյեկտների համար՝ | | |
| 1 ) | մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի,այդ թվում՝այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ | 0-15000 | 5000 |
| 2 ) | սույն կետի «1» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝ | | |
| ա. | 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ | 0-30000 | 15 000 |
| բ. | 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ | 0-50000 | 25 000 |
| գ . | 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար մինչև | 0-50000 | 25 000 |
| դ. | 3001 -ից ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | 100 000 | 50 000 |
| | ոչ հիմնական շինությունների տեղադրման համար | | |
| 3 ) | մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | 0-3000 | 1500 |
| 4 ) | 20 քառակուսի մետր և ավելի ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | 0-5000 | 1500 |
| 2. | Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերա-կանգնման, արդիականացման աշխատանքների ( բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի ) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով | | |
| 1 ) | չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում՝ ստորգետնյա / հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն | 3000 | 1500 |
| 2 ) | բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների ( այդ թվում՝ ստորգետնյա ) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի « 1»՝ ենթակետով սահմանված դրույքաչափի,կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով | | |

| | | | |
|---|---|---|---|
| 3 ) | նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա ) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա,սույն հավելվածի իմաստով , այն համարվում է նոր շինարարություն,, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը: | | |
| 3. | Համայնքի տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլատվության համար | 5000 | 2500 |
| 4. | Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝ | | |
| 1 ) | Ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝յուրաքանչյուր եռամսյակի համար՝ | 0-17500 | 2500 |
| 2 ) | ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝յուրաքանչյուր եռամսյակի համար՝ | 1500-17500 | 2500 |
| 5. | Համայնքի տարածքում | | |
| 1 ) | բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար յուրաքանչյուր օրվա համար՝ մեկ քառակուսի մետրի համար | 0-350 | 350 |
| 2 ) | հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլատվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է | 150 000-200 000 | 150 000 |
| 3 ) | խանութներում ,կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է | 30 000-60 000 | 30 000 |
| 4 ) | համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝ | | |
| ա. | հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում | 1000-6000 | 6000 |
| բ. | ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում | 0-1000 | 1000 |
| 5 ) | համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլատվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար | 50 000 | 50 000 |
| 6. | Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները(սաունաները) , խաղատները՝ ժամը 24.00 -ից հետո աշխատելու թույլատվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է | | |
| 1 ) | առևտրի օբյեկտների համար | 25000-50000 | 25 000 |
| 2 ) | հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար | 50000-100000 | 50 000 |
| 3 ) | բաղնիքների ( սաունաների )համար | 200000-500000 | 200 000 |
| 4 ) | խաղատների կազմակերպման համար | 500000-1000000 | 500 000 |

| | | | |
|---|---|---|---|
| 5 ) | շահումով խաղերի կազմակերպման համար | 250000-500000 | 250 000 |
| 6) | վիճակախաղերի կազմակերպման համար | 100000-150000 | 100 000 |
| 7. | Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլատվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝ | | |
| 1 ) | ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար | 1000-2000 | 1000 |
| 2 ) | թունդ ալկոհոլային ( սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար | 2500-3500 | 2500 |
| 3 ) | այլ արտաքին գովազդի համար | 500-1500 | 500 |
| 4 ) | դատարկ գովազդային վահանակների համար | 700 | 700 |
| 8. | Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է | 0-10000 | 500 |
| 1 ) | Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է | 50 000-100 000 | 50 000 |
| 9. | Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է | 0-10 000 | 10 000 |
| | Տեղական վճարներ | | |
| 1. | Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու,ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխ հատուցման վճար | | 5000 |
| 2. | Տեղական ինքնակառավարման մարմնի տնօրինման և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար | | 5000 |
| 3. | Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցների վճար | | 5000 |
| 4. | Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանություն կազմակերպելու համար աղբահանության վճարը սահմանվում է՝ կենցաղային աղբի համար՝ ըստ բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսեկան | 0-400 | 150 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Մ. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի հանրապետության կոտայքի մարզի Ակունքի համայնք,
հասցե՝ գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72 հեռ.(0222)6-01-60
էլ. փոստ՝ akunq.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՓԵՏՐՎԱՐԻ 2015թվականի N 8-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 15-Ի N5-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն « Իրավական ակտերի մասին »Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի ,հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը ,համայնքի ավագանին որոշում է ՝

1. Համայնքի ավագանու 2015թվականի հունվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունքի համայնքի աղբահանության իրականացման կարգը,սանիտարական մաքրման սխեման ,աղբահանության վճար վճարողների հաշվառման կարգը հաստատելու և աղբահանության վճարի գանձման մասին » N 5-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները .

1) որոշման 2-րդ կետի «100 » թիվը փոխարինել « 50 » թվով :

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասն երորդ օրը:

Ավագանու անդամներ

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1............................ ԱՎԱԳՅԱՆ ՆԱՐԻՆԵ

2. ..........................ԱՎԵՏԻՍՅԱՆ ՔԱՋԻԿ

3............................ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ՄԻՀՐԱՆ

4............................ ՄԿՐՏՉՅԱՆ ԳՈՌ

5............................ՍԱՄՍՈՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

6............................ ՏԻԳՐԱՆՅԱՆ ԷԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ